ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«____» _____ 2025թ. **N ____- Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ԳՈՒՅՔԸ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ (ՆՎԻՐԵԼՈՒ) ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 594-րդ հոդվածով և Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի N259-Ն որոշման հավելվածի 3-րդ կետով.

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի 2023 թվականի բյուջեի «Վարչական օբյեկտների կառուցում և հիմնանորոգում» ծրագրով ձեռք բերված 8,700,000 (ութ միլիոն յոթ հարյուր հազար դրամ) ՀՀ դրամ արժեքով թվով 1 (մեկ) վերելակը սեփականության իրավունքով անհատույց օտարել (նվիրել) «Սուրբ Աստվածամայր» բժշկական կենտրոն» ՓԲ ընկերությանը:

2. Երևանի քաղաքապետին՝ ապահովել «Սուրբ Աստվածամայր» բժշկական կենտրոն» ՓԲ ընկերության հետ նվիրատվության պայմանագրի կնքումը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԳՈՒՅՔԸ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ (ՆՎԻՐԵԼՈՒ) ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Երևան համայնքի կարիքների համար 2023 թվականին կնքված ԵՔ-ԲՄԱՊՁԲ-23/10 պայմանագրով «Սուրբ Աստվածամայր» բժշկական կենտրոն ՓԲ ընկերության 9 հարկանի մասնաշենքում փոխարինվել է թվով 1 (մեկ): Վերելակի ձեռքբերումը պայմանավորված է եղել հին վերելակի 25 տարի և ավել շահագործման մեջ լինելու հանգամանքով, ինչպես նաև վերելակի հիմնական հանգույցների մաշվածությամբ, որը հետագա ընթացիկ պահպանման միջոցառումները դարձնում էին ոչ արդյունավետ: Նոր վերելակը ձեռք է բերվել 8.700.000 (ութ միլիոն յոթ հարյուր հազար դրամ) ՀՀ դրամ արժեքով: Տեղադրման աշխատանքների ավարտից հետո վերելակի հետագա շահագործումը և պահպանումը իրականացվելու է «Սուրբ Աստվածամայր» բժշկական կենտրոն ՓԲ ընկերության կողմից:

Ելնելով վերոգրյալից՝ Երևանի ավագանու քննարկմանն է ներկայացվում «Գույքը սեփականության իրավունքով անհատույց օտարելու (նվիրելու) մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ